



ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Բրայքերի և ԻնՎեստիցիաների Ընկերություն

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
20.12.2014թ. թիվ 120-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝ 21.12.2014թ.-ից

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ՀԱՄԱԼԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ**

Ը Ն Թ Ա Յ Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույնով սահմանվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») կողմից Պարտատոմսերի շուկայում հաճախորդների համալիր սպասարկման ընթացակարգը:
- 1.2. Սույն ընթացակարգի իմաստով.
 - 1.2.1. **Աճուրդ**՝ Պարտատոմսերի թողարկումների առաջնային տեղաբաշխման և/կամ հետգնման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որին մասնակցելու նպատակով Ներդրողները ներկայացնում են Հայտեր,
 - 1.2.2. **Բանկ-Հաճախորդ համակարգ**՝ ծրագրային փաթեթ, որն ապահովում է Ներդրողի կողմից Հայտերի ներկայացումը Բանկին և Հայտերի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման հաղորդագրությունների ստացումը Բանկից,
 - 1.2.3. **Գլխավոր հաշվապահ**՝ Բանկում հաշվապահական հաշվառման համար պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ «ՀՀԴ») ղեկավար-գլխավոր հաշվապահ,
 - 1.2.4. **Ղեկո հաշիվ**՝ Պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված Բանկի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով,
 - 1.2.5. **Իրավասու աշխատակից**՝ ՀՀԴ համապատասխան աշխատակից, որն օժտված է Համակարգում համապատասխան գործառնությունների իրականացման իրավասություններով,
 - 1.2.6. **ՀՄԴ**՝ Բանկում Հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանում,
 - 1.2.7. **Համակարգ**՝ Բանկի հաշվապահական հաշվառման և հաշվետվողական «Գործառնական օր» ծրագրային համակարգ,
 - 1.2.8. **Հայտ**՝ Ներդրողի կողմից Բանկ ներկայացվող և Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և/կամ հետգնման Աճուրդին մասնակցելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ: Ընդ որում, Ներդրողի կողմից Հայտի ներկայացումը Բանկում վարվող Ներդրողի դրամային և դեպո հաշիվներում առկա համապատասխան միջոցների սառեցման հիմք է հանդիսանում, այն ծավալով, որն անհրաժեշտ է համապատասխան Աճուրդին մասնակցելու համար՝ ներառյալ Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները,
 - 1.2.9. **ՀՀԴ**՝ Համակարգ մուտքագրված տվյալների ստուգման և հաստատման համար պատասխանատու ստորաբաժանում,
 - 1.2.10. **Ներդրող**՝ Բանկի հաճախորդ, որը համաձայն սույն ընթացակարգի և գործող օրենսդրության, սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր և գործակալ/դիլեր չէ,
 - 1.2.11. **ՆԻ**՝ Պարտատոմսերով գործառնությունների համար պատասխանատու ստորաբաժանում,
 - 1.2.12. **Պատասխանատու ստորաբաժանում**՝ Բանկում Հաճախորդների սպասարկման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է Ներդրողների սպասարկումը,

- 1.2.13. **ՀԲ՝** Բանկում համադրման գործառնությունների համար պատասխանատու ենթաստորաբաժանում,
- 1.2.14. **Պայմանագիր՝** Ներդրողի հետ կնքվող Պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագիր (Հավելված 1),
- 1.2.15. **Պարտատոմս՝** Հայաստանի Հանրապետության Պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային, պարտատոմսեր ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող պետական պարտատոմսեր, ինչպես նաև այլ արժեթղթեր, որոնց շրջանառությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն ՀՀ կենտրոնական բանկը կհանդիսանա սովյալ արժեթղթերի Պահառու,
- 1.2.16. **Սպասարկող՝** Պատասխանատու ստորաբաժանման աշխատակից, որը պատասխանատու է Ներդրողի սպասարկման համար,
- 1.2.17. **Սպասարկում՝** Ներդրողի կողմից Պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագրի շրջանակներում, Պարտատոմսերով իրականացվող ցանկացած գործառնության իրականացում,
- 1.2.18. **Փաթեթ՝** Պայմանագրի կնքման նպատակով Ներդրողի կողմից Բանկ ներկայացվող փաստաթղթերի ամբողջություն:
- 1.3. Սույն ընթացակարգի դրույթների կատարումը պարտադիր է Սպասարկման գործընթացին առնչվող Բանկի բոլոր ստորաբաժանումների և աշխատակիցների համար:
- 1.4. Բանկը Սպասարկումն իրականացնում է Ներդրողների համար Բանկում բացված դեպո հաշիվներով:
- 1.5. Ներդրողների հետ կապված ամբողջ աշխատանքը բաժանվում է հետևյալ փուլերի.
 - 1.5.1. Ներդրողի հետ Պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագրի կնքումը և դեպո հաշվի բացումը:
 - 1.5.2. Ներդրողի կողմից Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և/կամ հետգնման Աճուրդներին մասնակցության իրականացումը:
 - 1.5.3. Պարտատոմսերի մարման, մասնակի մարման, արժեկտրոնային եկամտի վճարման իրականացումը:
 - 1.5.4. Երկրորդային շուկայում և գրավադրման հետ կապված գործառնությունների իրականացումը:
 - 1.5.5. Գրավադրված Պարտատոմսերի մարման, մասնակի մարման, գրավադրված Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամտի վճարման գործառնությունների իրականացումը:
 - 1.5.6. Տեղեկանքների, քաղվածքների, հաշվետվությունների տրամադրումը:
 - 1.5.7. Դեպո հաշիվների փակումը:
- 1.6. Սպասարկման հետ առնչվող սույն ընթացակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ Ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին ակտերով:

2. ՆԵՐԴՐՈՂԻ ՀԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԴԵՊՈ ՀԱՇՎՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

- 2.1. Ներդրողի հետ Պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագրի կնքումը և դեպո հաշիվների բացումն իրականացվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն՝
 - 2.1.1. Ներդրողը Բանկի հետ Պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքելու նպատակով Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 2.1.1.1. դիմում (Հավելված 2.1 կամ 2.2.),
 - 2.1.1.2. Այն անձանց ցուցակը և ստորագրությունների նմուշները, որոնք լիազորված են Պայմանագրի շրջանակներում տնօրինել Ներդրողի դրամական միջոցները և Դեպո հաշիվներով գործառնություններ իրականացնել:
 - 2.1.2. Սպասարկողը պարտավոր է Ներդրողին համառոտ տեղեկացնել Պայմանագրի հիմնական դրույթների մասին:
 - 2.1.3. Սպասարկողը ստորագրում է Դեպո հաշիվ բացելու դիմումը, վավերացնելով, որ Ներդրողի կողմից ներկայացված փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են սույն ընթացակարգին տրամադրում է տվյալները ՀԲ աշխատակցին, որը Համակարգում բացում է Ներդրողի սեփական Դեպո հաշիվները (ազատ, գրավադրված, արգելադրված) համաձայն ՀՀ կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման կարգում» սահմանված կանոնների: Սպասարկողը կազմում է Պայմանագիրը երկու օրինակից, բացված դեպո հաշվեհամարները նշում է Պայմանագրի օրինակներում, որոնք ստորագրվում են Ներդրողի կողմից: Այնուհետև Փաթեթը, ներառյալ՝ Պայմանագիրը, փոխանցվում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին:
 - 2.1.4. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը ստուգում է ներկայացված Փաթեթի, ներառյալ Պայմանագրի համապատասխանությունը սույն ընթացակարգին և ստորագրում է դիմումի և Պայմանագրի վերջին էջերի վրա: Անհամապատասխանության դեպքում Փաթեթը՝ ներառյալ Պայմանագիրը վերադարձվում է Սպասարկողին, որը կապ է հաստատում Ներդրողի հետ և շտկում անհամապատասխանությունները:
 - 2.1.5. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրված Փաթեթը ներկայացվում է ՀՄԴ ղեկավարին, որը ևս ստորագրում է Պայմանագրի վերջին էջի վրա և ներկայացնում է այն ստորագրման Բանկի Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին, որից հետո Պայմանագրի բնօրինակի մեկ օրինակը տրամադրվում է Ներդրողին:

3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՃՈՒՐՂԻՆ ՆԵՐՂՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 3.1. Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման Աճուրդներին Ներդրողների մասնակցությունն ապահովվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
- 3.1.1. Ներդրողն Աճուրդի անցկացման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ Սպասարկողին թղթային կամ Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով ներկայացնում է Պարտատոմսերի ձեռքբերման հայտ (Հավելված 3): Թղթային եղանակի դեպքում Հայտը ներկայացվում է երեք օրինակից:
- 3.1.2. Ներդրողը պարտավոր է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ Բանկում սպասարկվող իր ընթացիկ դրամային հաշվին ապահովել Հայտում նշված Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ դրամական միջոցների ողջ ծավալը, ներառյալ Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները, այլապես Հայտը մերժվում է:
- 3.1.3. Հայտը կարող է պարունակել ինչպես մրցակցային, այնպես էլ ոչ մրցակցային առաջարկություններ:
- 3.1.4. Ներդրողի հայտը կարող է ընդգրկել առավելագույնը քսան մրցակցային առաջարկություն և միայն մեկ ոչ մրցակցային առաջարկություն: Մրցակցային առաջարկությունների քանակը նախապես պետք է համաձայնեցվի ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ:
- 3.2. Հաճախորդի կողմից Հայտը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում.
- 3.2.1. Սպասարկողը ստուգում է Հայտը ներկայացնող անձի լիազորությունները, Հայտի լրացման ճշտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև տվյալ Ներդրողի համապատասխան հաշիվներում առկա միջոցների բավարարությունը, որից հետո համաձայնեցնում է Հայտի էական պայմանները ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Եթե Հայտն ամբողջական լրացված չէ կամ լրացված է ոչ ճիշտ, ապա Հայտը չի ընդունվում և վերադարձվում է Ներդրողին:
- 3.2.2. Հայտը համարվում է ընդունված Սպասարկողի կողմից Հայտի վրա այն ընդունելու մասին նշում կատարելուց և ստորագրելուց հետո: Ընդ որում «ընդունված է» նշագրումով և Սպասարկողի ստորագրությամբ օրինակը վերադարձվում է Ներդրողին կամ վերջինիս կողմից լիազորված անձին: Հայտերի վրա նշվում է նաև Հայտի ընդունման ժամը և ամսաթիվը: Տվյալ Աճուրդի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 15 րոպե առաջ Սպասարկողը Հայտի լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին, իսկ Հայտի բնօրինակը մնում է Սպասարկողի մոտ:
- 3.3. Հաճախորդի կողմից Հայտն էլեկտրոնային եղանակով (Բանկ-Հաճախորդ համակարգով) ներկայացնելու դեպքում.

- 3.3.1. Սպասարկողը ստուգում է Հայտի լրացման ճշտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև տվյալ Ներդրողի համապատասխան հաշիվներում առկա միջոցների բավարարությունը, որից հետո համաձայնեցնում է Հայտի էական պայմանները ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Եթե Հայտն ամբողջական լրացված չէ կամ լրացված է ոչ ճիշտ, ապա Հայտը չի ընդունվում և Ներդրողին ուղարկվում է Հայտի չընդունման մասին հաղորդագրություն՝ նշելով մերժման պատճառը:
- 3.3.2. Բոլոր տվյալների համապատասխանության դեպքում Ներդրողին ուղարկվում է Հայտի ընդունման մասին հաղորդագրություն, իսկ Սպասարկողը Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով ստացված Հայտը տպում է երկու օրինակից, ստորագրում է և նշում ընդունման ժամը և ամսաթիվը: Տվյալ Աճուրդի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 15 րոպե առաջ Սպասարկողը Հայտի լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին, իսկ Հայտի բնօրինակը մնում է Սպասարկողի մոտ:
- 3.4. Ընդունված Հայտերը տվյալ Աճուրդի անցկացման օրվա Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 5 րոպե առաջ ՆԴ պատասխանատու աշխատակցի կողմից մուտքագրվում են համակարգ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ֆորմատներով:
- 3.5. Աճուրդին Բանկի կողմից ներկայացված Հայտերի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկից ստացված էլեկտրոնային Հաղորդագրության լուսապատճենը Իրավասու աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին:
- 3.6. Աճուրդի պաշտոնական արդյունքները ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի կամ CBANet համակարգի միջոցով ստանալուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին և Գլխավոր հաշվապահին:
- 3.7. Աճուրդի պաշտոնական արդյունքների հիման վրա ՆԴ պատասխանատու աշխատակիցը պատրաստում է Ներդրողների կողմից ներկայացված և Աճուրդի արդյունքներով բավարարված և/կամ մերժված Հայտերի վերաբերյալ տեղեկանք (Հավելված 5.1), որը ստորագրվում է ՆԴ ղեկավարի կամ ՆԴ ղեկավարի տեղակալի կողմից: Տեղեկանքի բնօրինակը մնում է ՆԴ-ում՝ համապատասխան թղթապանակում, իսկ վերջինիս լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ՆԴ պատասխանատու աշխատակիցն ուղարկում է Իրավասու աշխատակցին և Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին:
- 3.8. Ներկայացված տեղեկանքի հիման վրա Սպասարկողը կատարում է համապատասխան ձևակերպումներ.
- 3.8.1. Հայտի բավարարման կամ մասնակի բավարարման դեպքում Սպասարկողը Ներդրողի համապատասխան դրամային հաշվից գանձում է տեղեկանքում նշված (բավարարված) գումարը, ներառյալ Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները և Հայտում նշված Դեպո հաշվին է մուտքագրում Աճուրդի ընթացքում ձեռքբերված Պարտատոմսերը: Հայտի մասնակի բավարարման դեպքում Սպասարկողը նաև Ներ-

դրողի դրամային հաշվում ապաստանեցնում է Աճուրդին ներկայացված Հայտի մերժված ծավալի չափով գումարը:

- 3.8.2. Հայտի մերժման դեպքում Սպասարկողը ապաստանեցնում է Ներդրողի համապատասխան հաշվում առկա դրամական միջոցները:
- 3.8.3. Պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից կատարված ձևակերպումները հաստատում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը կամ տվյալ ստորաբաժանման աշխատակիցը, որն օժտված է նման իրավասություններով:
- 3.9. Մույն ակտի 3.10. կետով նախատեսված գործողություններն իրականացնելուց հետո Սպասարկողը կազմում է Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման հաղորդագրություն (Հավելված 4), որի թղթային տարբերակը ստորագրվում է վերջինիս և Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից և տրամադրվում Ներդրողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով:
- 3.10. Աճուրդին հաջորդող բանկային օրը ՆԴ պատասխանատու աշխատակիցը, Սպասարկողը և Իրավասու աշխատակիցը պարտավոր են համադրել ՀՀ կենտրոնական բանկից ստացված քաղվածքների և տեղեկանքների տվյալների համապատասխանությունը Բանկում եղած տվյալների հետ:

4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԱՃՈՒՐԴԻՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 4.1. Պարտատոմսերի հետգնումն իրականացվում է համաձայն Պարտատոմսերի հետգնման մասին թողարկողի կողմից տրված հայտարարության մեջ նշված պայմանների:
- 4.2. Հետգնման Աճուրդի առարկա կարող են հանդիսանալ միայն առանց որևէ սահմանափակումների (ազատ) Պարտատոմսերը:
- 4.3. Պարտատոմսերի հետգնման Աճուրդներին Ներդրողների մասնակցությունն ապահովվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
 - 4.3.1. Ներդրողը Պարտատոմսերի հետգնման Աճուրդի անցկացման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ Սպասարկողին թղթային կամ Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով ներկայացնում է Պարտատոմսերի վաճառքի հայտ (Հավելված 3): Թղթային եղանակի դեպքում Հայտը ներկայացվում է երեք օրինակից:
 - 4.3.2. Ներդրողը պարտավոր է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ Բանկում սպասարկվող իր Դեպո հաշվին ապահովել Հայտում նշված վաճառվող Պարտատոմսերի ողջ ծավալը, այլապես Հայտը մերժվում է:
 - 4.3.3. Մրցակցային առաջարկություններով հետգնման դեպքում Ներդրողի Հայտը կարող է պարունակել առավելագույնը քսան մրցակցային առաջարկություն: Սակայն վերջիններիս քանակը նախապես պետք է համաձայնեցվի ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ:

- 4.3.4. Նախապես հայտարարված եկամտաբերությամբ հետզմանան դեպքում Հայտը կարող է պարունակել միայն մեկ առաջարկություն հայտարարված եկամտաբերությամբ՝ Պարտատոմսերի կոնկրետ թողարկման գծով:
- 4.4. Հաճախորդի կողմից Հայտը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում.
- 4.4.1. Սպասարկողը ստուգում է Հայտը ներկայացնող անձի լիազորությունները, Հայտի լրացման ճշտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև տվյալ Ներդրողի համապատասխան Դեպո հաշիվներում առկա Պարտատոմսերի բավարարությունը, որից հետո համաձայնեցնում է Հայտի էական պայմանները ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Եթե Հայտն ամբողջական լրացված չէ կամ լրացված է ոչ ճիշտ, ապա Հայտը չի ընդունվում և վերադարձվում է Ներդրողին:
- 4.4.2. Հայտը համարվում է ընդունված Սպասարկողի կողմից Հայտի վրա այն ընդունելու մասին նշում կատարելուց և ստորագրելուց հետո: Ընդ որում «ընդունված է» նշագրումով և Սպասարկողի ստորագրությամբ օրինակը վերադարձվում է Ներդրողին կամ վերջինիս կողմից լիազորված անձին: Հայտերի վրա նշվում է նաև Հայտի ընդունման ժամը և ամսաթիվը: Տվյալ Աճուրդի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 15 րոպե առաջ Սպասարկողը Հայտի լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին, իսկ Հայտի բնօրինակը մնում է Սպասարկողի մոտ:
- 4.5. Հաճախորդի կողմից Հայտն էլեկտրոնային եղանակով (Բանկ-Հաճախորդ համակարգով) ներկայացնելու դեպքում.
- 4.5.1. Սպասարկողը ստուգում է Հայտի լրացման ճշտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև տվյալ Ներդրողի համապատասխան Դեպո հաշիվներում առկա Պարտատոմսերի բավարարությունը, որից հետո համաձայնեցնում է Հայտի էական պայմանները ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Եթե Հայտը ամբողջական լրացված չէ կամ լրացված է ոչ ճիշտ, ապա Հայտը չի ընդունվում և Ներդրողին ուղարկվում է Հայտի չընդունման մասին հաղորդագրություն՝ նշելով չընդունման պատճառը:
- 4.5.2. Բոլոր տվյալների համապատասխանության դեպքում Ներդրողին ուղարկվում է Հայտի ընդունման մասին հաղորդագրություն, իսկ Սպասարկողը Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով ստացված Հայտը տպում է երկու օրինակից, ստորագրում է և նշում ընդունման ժամը և ամսաթիվը: Տվյալ Աճուրդի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 15 րոպե առաջ Սպասարկողը Հայտի լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին, իսկ Հայտի բնօրինակը մնում է Սպասարկողի մոտ:
- 4.6. Ընդունված Հայտերը տվյալ Աճուրդի անցկացման օրվա Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 5 րոպե առաջ ՆԴ պատասխանատու աշխատակցի կողմից մուտքագրվում են համակարգ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ֆորմատներով:

- 4.7. Աճուրդին Բանկի կողմից ներկայացված Հայտերի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկից ստացված էլեկտրոնային Հաղորդագրության լուսապատճենը Իրավասու աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին:
- 4.8. Աճուրդի պաշտոնական արդյունքները ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի կամ CBANet համակարգի միջոցով ստանալուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին և Գլխավոր հաշվապահին:
- 4.9. Աճուրդի պաշտոնական արդյունքների հիման վրա ՆԴ պատասխանատու աշխատակիցը պատրաստում է Ներդրողների կողմից ներկայացված և Աճուրդի արդյունքներով բավարարված և/կամ մերժված Հայտերի վերաբերյալ տեղեկանք (Հավելված 5.1), որը ստորագրվում է ՆԴ ղեկավարի կամ ՆԴ ղեկավարի տեղակալի կողմից: Տեղեկանքի բնօրինակը մնում է ՆԴ-ում՝ համապատասխան թղթապանակում, իսկ վերջինիս լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ՆԴ պատասխանատու աշխատակիցը ուղարկում է Իրավասու աշխատակցին և Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին:
- 4.10. Ներկայացված տեղեկանքի հիման վրա Սպասարկողը կատարում է համապատասխան ձևակերպումներ:
- 4.10.1. Հայտի բավարարման կամ մասնակի բավարարման (մրցակցային առաջարկությունների ներկայացմամբ հետգնման դեպքում) դեպքում Սպասարկողը Ներդրողի համապատասխան դրամային հաշվին փոխանցում է տեղեկանքում նշված (բավարարված) գումարը, հանած Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները, իսկ Ներդրողի համապատասխան Դեպո հաշվից ելքագրում է Աճուրդի ընթացքում վաճառված Պարտատոմսերը: Հայտի մասնակի բավարարման դեպքում Սպասարկողը նաև ապաստանեցնում է Ներդրողի Դեպո հաշվում առկա Պարտատոմսերը Աճուրդին ներկայացված Հայտի մերժված ծավալի չափով:
- 4.10.2. Հայտի մերժման դեպքում Սպասարկողը ապաստանեցնում է Ներդրողի Դեպո հաշվում առկա Պարտատոմսերը:
- 4.11. Սույն ակտի 4.12. կետով նախատեսված գործողություններն իրականացնելուց հետո Սպասարկողը կազմում է Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման հաղորդագրություն (Հավելված 4), որը ստորագրվում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից և տրամադրում է այն Ներդրողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով:
- 4.12. Աճուրդին հաջորդող բանկային օրը ՆԴ պատասխանատու աշխատակիցը, Սպասարկողը և Իրավասու աշխատակիցը պարտավոր են համադրել ՀՀ կենտրոնական բանկից ստացված քաղվածքների և տեղեկանքների տվյալների համապատասխանությունը Բանկում եղած տվյալների հետ:

5. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ, ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԿՏՈՆԱՅԻՆ ԵԿԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- 5.1. Պարտատոմսերի մարումը, միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային Պարտատոմսերի պարագայում՝ մասնակի մարումը, իրականացվում է Ներդրողների Դեպո հաշիվներով: Մարման, մասնակի մարման կամ արժեկտրոնային եկամտի վճարման օրը՝ մինչև տվյալ գործառնության կատարման ավարտը, մարվող, մասնակի մարվող կամ արժեկտրոնային եկամուտ վճարվող Պարտատոմսերով ոչ մի այլ տեսակի գործառնություններ չեն կարող կատարվել: Եթե նշված օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարումը, մասնակի մարումը կամ արժեկտրոնային եկամտի վճարումը և դրա հետ կապված գործողություններն իրականացվում են ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
- 5.2. Սպասարկողը, ինչպես նաև Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Համակարգի միջոցով պարտավոր են հետևել Ներդրողների Դեպո հաշիվներում առկա Պարտատոմսերի մարման, մասնակի մարման կամ արժեկտրոնային եկամտի վճարման ժամանակացույցին:
- 5.3. Պարտատոմսերի մարման, մասնակի մարման կամ արժեկտրոնային եկամտի վճարման օրը, մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը, Սպասարկողը կազմում է Ներդրողներին պատկանող Պարտատոմսերի մարման, մասնակի մարման և/կամ արժեկտրոնի վճարման վերաբերյալ տեղեկանք (Հավելված 5.3), որը ստորագրվում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից և Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում է ՆԴ ղեկավարին և Գլխավոր հաշվապահին:
- 5.4. Ներկայացված տեղեկանքի հիման վրա Իրավասու աշխատակիցը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ:
- 5.5. Իրավասու աշխատակցի կողմից 5.4. կետում նշված գործողություններն իրականացնելուց հետո Սպասարկողը կատարում է համապատասխան ձևակերպումները, մուտքագրելով տեղեկանքում նշված գումարները Ներդրողների համապատասխան դրամային հաշիվներին, իսկ Պարտատոմսերի մարման կամ մասնակի մարման դեպքում նաև ելքագրում է համապատասխան Պարտատոմսերը Ներդրողների Դեպո հաշիվներից: Նշված ձևակերպումները հաստատվում են Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ տվյալ ստորաբաժանման՝ նման իրավասություններով օժտված աշխատակցի կողմից:
- 5.6. Պարտատոմսերի մարմանը (մասնակի մարմանը) հաջորդող բանկային օրը ՆԴ պատասխանատու աշխատակիցը, Սպասարկողը և Իրավասու աշխատակիցը պարտավոր են համադրել ՀՀ կենտրոնական բանկից ստացված քաղվածքների և տեղեկանքների տվյալների համապատասխանությունը Բանկում եղած տվյալների հետ:

6. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

- 6.1. Ներդրողների կողմից դեպո հանձնարարականները Բանկ կարող են ներկայացվել երկու եղանակով՝ թղթային կամ էլեկտրոնային: Էլեկտրոնային դեպո հանձնարարականներն առաքվում են Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով Ներդրողի մոտ տեղակայված աշխատանքային կայանից: Սպասարկողը, ստանալով էլեկտրոնային դեպո հանձնարարականը, տպում է այն երեք օրինակից, վավերացնում է իր ստորագրությամբ և ներկայացնում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին: Վերջինս համեմատում է ներկայացված հանձնարարականի թղթային տարբերակը էլեկտրոնային տարբերակի հետ և համապատասխանության դեպքում ստորագրում է այն: Անհամապատասխանության դեպքում հանձնարարականի թղթային տարբերակը վերադարձվում է Սպասարկողին անհամապատասխանությունները պարզելու նպատակով: Բանկ-Հաճախորդ համակարգով ներկայացված էլեկտրոնային հանձնարարականի տպված օրինակը համարվում է որպես թղթային կրիչով ներկայացված հանձնարարական և ենթակա է կատարման համաձայն սույն ընթացակարգի դրույթների:
- 6.2. Թղթային դեպո հանձնարարականների ընդունումը, սկզբնական ստուգումը իրականացվում է Սպասարկողի կողմից: Թղթային եղանակի դեպքում Հայտը ներկայացվում է երկու օրինակից:
- 6.3. Սպասարկողը ստուգում է՝
 - 6.3.1. Ներկայացված հանձնարարականի համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան դեպո հանձնարարականի օրինակելի ձևին:
 - 6.3.2. Ներդրողի լիազոր անձանց ստորագրությունների (իրավաբանական անձի համար նաև առկայության դեպքում կնիքի) առկայությունը և դրանց համապատասխանությունը Բանկ ներկայացված նմուշներին:
 - 6.3.3. Հանձնարարականում նշված Պարտատոմսերի առկայությունը Ներդրողի Դեպո հաշվում:
 - 6.3.4. Ջնջումների/ուղղումների բացակայությունը:
- 6.4. Ստուգման բացասական արդյունքի դեպքում դեպո հանձնարարականի 2 օրինակները վերադարձվում են Ներդրողին՝ մերժման պատճառի նշումով: Ստուգման դրական արդյունքի դեպքում Սպասարկողը հանձնարարականների վրա նշում է ընդունման ամսաթիվն ու վավերացնում է իր ստորագրությամբ, դեպո հանձնարարականի մեկ օրինակը վերադարձվում է Ներդրողին, երկրորդ օրինակը պահվում է ՀՄԴ-ում, իսկ հանձնարարականի լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվում է Գլխավոր հաշվապահին և Իրավասու աշխատակցին:
- 6.5. Ստացված Դեպո հանձնարարականի հիման վրա Իրավասու աշխատակիցը BankMail վճարային համակարգով կազմում և ուղարկում է համապատասխան հաղորդագրությունը: BankMail վճարային համակարգով հաղորդագրություն ուղարկելու անհնարինությունը:

յան դեպքում դեպո հանձնարարականը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվում է թղթային եղանակով:

- 6.6. Իրավասու աշխատակիցը պարտավոր է տվյալ գործառնական օրվա ընթացքում հետևել դեպո հանձնարարականների կատարման վերաբերյալ ծանուցող ՀՏ 535 հաղորդագրությունների ստացմանը: ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված դեպո հանձնարարականի թղթային կամ էլեկտրոնային հաղորդագրության տպագրված տարբերակը և դեպո հանձնարարականի կատարման վերաբերյալ ՀՏ535 տպագրված հաղորդագրությունը Իրավասու աշխատակիցը ստորագրում և փոխանցում է Սպասարկողին:
- 6.7. Իրավասու աշխատակցի կողմից ներկայացված հաղորդագրության և հանձնարարականի հիման վրա Սպասարկողը ելքագրում (մուտքագրում) է համապատասխան Պարտատոմսերը Համակարգում, որը հաստատվում է Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ տվյալ ստորաբաժանման՝ նման իրավասություններով օժտված աշխատակցի կողմից: Ձևակերպման հաստատումից հետո Սպասարկողը տպում ու ստորագրում է մեմորիալ օրդերը, որը կարվում է օրվա գործերում:
- 6.8. Դեպո հանձնարարականի մուտքագրումը Համակարգ իրականացվում է դեպո հանձնարարականում նշված կատարման օրը: Դեպո հանձնարարականում կատարման օրը նշված չլինելու դեպքում, այն կատարվում է ներկայացման օրը: Եթե դեպո հանձնարարականը ներկայացվել է ժամը 16:00-ից հետո, ապա այն մուտքագրվում է ներկայացմանը հաջորդող առաջիկա աշխատանքային օրը:
- 6.9. Ներդրողները կարող են հեռախոսով նախնական տեղեկատվություն ստանալ իրենց կողմից ներկայացված դեպո հանձնարարականների մշակման ընթացքի վերաբերյալ՝ դիմելով իրենց Սպասարկողին:
- 6.10. Իրավասու աշխատակիցը, հաջորդ բանկային օրը ստանալով ՀՀ կենտրոնական բանկից ներդրողների դեպո հաշվից քաղվածքը, ստուգում է նախորդ օրվա գործարքները քաղվածքում արտացոլված գործարքների հետ: Անհամապատասխանության դեպքում նա անհապաղ տեղյակ է պա հում այդ մասին Գլխավոր հաշվապահին:

**7. ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎԱԾ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԴԻՄԱՅ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵԿԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ
ԳՈՐԾԱՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

- 7.1. Ներդրողի և Բանկի միջև սույն ընթացակարգի համաձայն Պայմանագիր կնքելիս, Ներդրողի անունով Համակարգում բացվում է «Գրավադրված Պարտատոմսերի մարումից առաջացած միջոցների» դրամական հաշիվ, որում հաշվառվում են Գրավատու Ներդրողի գրավադրված Պարտատոմսերի մարման/արժեկտրոնային եկամտի վճարման արդյունքում գոյացող դրամական միջոցները: Բացված հաշվի հաշվեհամարը Սպասարկողի կողմից մուտքագրվում է Համակարգում վարվող Ներդրողի քարտի «հաշվետիրոջ գրավադրված պարտատոմսերի դրամական հաշվի համար» դաշտում:
- 7.2. Գրավադրված պարտատոմսերի մարման (գրավադրված պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման) դեպքերում Համակարգն ավտոմատ մուտքագրում է գրավադրված

պարտատոմսերի մարումից (արժեկտրոնային եկամտի վճարումից) առաջացած միջոցները Գրավատու Ներդրողի «Գրավադրված Պարտատոմսերի մարումից առաջացած միջոցներ» դրամական հաշվի վրա:

- 7.3. «Գրավադրված Պարտատոմսերի մարումից առաջացած միջոցներ» դրամական հաշվի միջոցների կառավարումը իրականացվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի «Պահառուի գործառնությունների իրականացման աշխատակարգի»:

8. ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ, ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ


- 8.1. Համակարգի գործառնական օրը փակելիս ավտոմատ կերպով ձևավորվում են Դեպո հաշիվների քաղվածքներ, որոնք մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ը Սպասարկողի կողմից թղթային կամ էլեկտրոնային եղանակով տրամադրվում են Ներդրողներին: Էլեկտրոնային եղանակով տրամադրելու անհնարինության դեպքում քաղվածքները տրամադրվում են թղթային եղանակով:
- 8.2. Ներդրողների պահանջով Պատասխանատու ստորաբաժանման կողմից վերջիններիս տրամադրվում են Համակարգի կողմից մշակվող տարբեր տեսակի տեղեկանքներ:

9. ԴԵՊՈ ՀԱՇՎՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ

- 9.1. Դեպո հաշիվների փակումն իրականացվում է ՀԲ կողմից՝ Ներդրողի գրավոր դիմումի հիման վրա, Ներդրողի դեպո հաշիվներում մեկ տարվա կտրվածքով գրոյական մնացորդի դեպքում:

10. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 10.1. Սույն ներքին ակտով սահմանված դրույթների կատարման, առաջացած խնդիրների մասին զեկուցման, ինչպես նաև ակտի վերանայման համար պատասխանատու է ՆԴ ղեկավարը:

	<i>Պետական պարտատոմսերի շուկայում հաճախորդների համալիր սպասարկման ընթացակարգ</i>		
	Տարբերակ՝ 5.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 20.12.2014թ.

Հավելված 1

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ

--/--/20

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ Բանկ, ի դեմս Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և -----, (այսուհետ՝ Ներդրող), մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Սույն պայմանագրով Բանկը Ներդրողի Պարտատոմսերի հաշվառման նպատակով բացում է Դեպո հաշիվ և իրականացնում է այդ հաշվի սպասարկումը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի, Բանկի «Պետական պարտատոմսերի շուկայում հաճախորդների համալիր սպասարկման ընթացակարգ»-ի և Բանկի այլ ներքին կանոնակարգող ակտերի:
- 1.2 Բանկի կողմից հաստատված «Պետական պարտատոմսերի շուկայում հաճախորդների համալիր սպասարկման ընթացակարգ»-ը համարվում է պահառության պայմանագրի անբաժանելի մասը:
- 1.3 Դեպո հաշվի բացումն ու սպասարկումն իրականացնում է Բանկը՝ Ներդրողի հաշվին Պարտատոմսերով ՀՀ օրենսդրությամբ թույլատրված գործառնություններ իրականացնելու նպատակով:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1 **Աճուրդ**՝ Պարտատոմսերի թողարկումների առաջնային տեղաբաշխման և/կամ հետզնման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որին մասնակցելու նպատակով Ներդրողը ներկայացնում է Հայտեր:
- 2.2 **Աշխատանքային օր**՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, ինչպես նաև յուրաքանչյուր շաբաթվա շաբաթ ու կիրակի օրերից բացի ցանկացած օրացուցային օր:
- 2.3 **Բանկ-Հաճախորդ համակարգ**՝ ծրագրային փաթեթ, որն ապահովում է Ներդրողի կողմից Հայտերի ներկայացումը Բանկին և վերջիններիս բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման հաղորդագրությունների ստացումը Բանկից:
- 2.4 **Գործառնական օր**՝ Բանկի Աշխատանքային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում վերջինս իրականացնում է իր հաճախորդների սպասարկումը:
- 2.5 **Դեպո հաշիվ**՝ Բանկում վարվող Պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:

- 2.6 **Հայտ**՝ Ներդրողի կողմից Բանկ ներկայացվող և Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և/կամ հետգնման Աճուրդին մասնակցելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ: Ընդ որում, Ներդրողի կողմից Հայտի ներկայացումը Բանկում վարվող Ներդրողի դրամային կամ դեպո հաշիվներում առկա համապատասխան միջոցների սառեցման հիմք է հանդիսանում, այն ծավալով, որն անհրաժեշտ է համապատասխան Աճուրդին մասնակցելու համար՝ ներառյալ Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները:
- 2.7 **Դեպո հանձնարարական**՝ Ներդրողի կողմից Բանկ ներկայացվող և Պարտատոմսերով գործառնությունների իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ: Ընդ որում, Ներդրողի կողմից Դեպո հանձնարարականի ներկայացումը Բանկում վարվող իր Դեպո հաշվում առկա համապատասխան Պարտատոմսերի սառեցման հիմք է հանդիսանում, այն ծավալով, որն անհրաժեշտ է համապատասխան գործառնությունն իրականացնելու համար: Բանկ ներկայացվող Դեպո հանձնարարականների օրինակելի ձևերը կցվում են (Ձև 1-12):
- 2.8 **Պարտատոմս**՝ Հայաստանի Հանրապետության Պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային, պարտատոմսեր ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող պետական պարտատոմսեր, ինչպես նաև այլ պարտատոմսեր, որոնց շրջանառությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն ՀՀ կենտրոնական բանկը կհանդիսանա տվյալ պարտատոմսերի Պահառու:

3. ԴԵՊՈ ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 3.1 Ներդրողի Դեպո հաշվով գործարքներն իրականացվում են՝
- 3.1.1 Ներդրողի անունից և վերջինիս հաշվին. տվյալ դեպքում իրավունքներն ու պարտականություններն անմիջականորեն ծագում են Ներդրողի համար.
- 3.1.2 Բանկի անունից, սակայն Ներդրողի հաշվին. տվյալ դեպքում իրավունքները և պարտականությունները ձեռք է բերում Բանկը:
- 3.2 Դեպո-հաշվից Պարտատոմսերի ելքագրումն իրականացվում է Ներդրողի կողմից տրված Դեպո հանձնարարականի հիման վրա տվյալ Գործառնական օրվա ընթացքում և միայն Դեպո հանձնարարականի ստացման օրվա դրությամբ Դեպո հաշվի մնացորդի սահմաններում, եթե Դեպո հանձնարարականը ստացվել է մինչև ժամը 15⁰⁰-ն, այլապես գործառնությունն իրականացվում է հաջորդ Գործառնական օրվա ընթացքում:
- 3.3 Ներդրողի կողմից Պարտատոմսերով իրականացվող գործարքների վերաբերյալ Դեպո հանձնարարականները Բանկ ներկայացվում են թղթային կրիչներով, կամ Ներդրողի հետ կնքված լրացուցիչ համաձայնագրով նախատեսված այլ կապի միջոցներով:
- 3.4 Դեպո հաշվի վիճակի վերահսկողությունը, Պարտատոմսերի քանակի համապատասխանությունը, Դեպո-հաշվի մնացորդը, ռեկվիզիտների ճշտությունը, Դեպո հաշիվ ելքագրման և մուտքագրման իրավական հիմքի ստուգումը իրականացվում է Ներդրողի կողմից: Սույն պայմանագրի Կողմերից յուրաքանչյուրն ինքնուրույն է հաշվառում Դեպո հաշվով իրականացվող գործառնությունները, իր մոտ եղած տվյալների հիման վրա:

